Mayors for
Economic Growth

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Ընդհանուր սկզբունքներ և մոտեցումներ



2017

Բովանդակություն

Ի՞նչ է «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությունը 4
«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության 6
Նպատակները 7
Բարի գալուստ «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» ակումբ 8
Տեղական տնտեսական զարգացումը՝ «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության հետ 9
Նախաձեռնության հիմնասյունները 10
Տեղական տնտեսական զարգացման հաջողության պատմությունները 16
Ինչպե՞ս է աշխատելու «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությունը 20
“«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Քարտուղարության դերը 24
Դրամաշնորհային աջակցություն 27
Կոնտակտային տվյալներ 30

Ի՞նչ է «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությունը

2016թ. հոկտեմբերի 26-ին Երևանում կայացած բարձր մակարդակի համաժողովից[1] մեկնարկած «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» ծրագիրը Եվրոպական միության նոր նախաձեռնությունն է, որը վերաբերում է Արևելյան գործընկերության (ԱլԳ) երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի տեղական ինքնակառավարման մարմիններին:[2]

«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության հիմքում կայուն տնտեսական զարգացումն (ԿՏԶ) է: Նախաձեռնության նպատակն է տեղական մակարդակում աջակցել համայնքներին և համայնքի ղեկավարներին՝ դառնալու տնտեսական զարգացման և աշխատատեղերի ստեղծման ակտիվ նախաձեռնողներ՝ սեփական կարողությունների, տեխնիկական հմտությունների զարգացման և մասնավոր հատվածի ու քաղաքացիական հասարակության հետ համագործակցության ճանապարհով:

Կայուն տեղական տնտեսական զարգացումը գործընթաց է, որի միջոցով տեղական ինքնակառավարման մարմինները համագործակցում են գործընկերների (մասնավոր հատված, հանրային կազմակերպություններ և ՔՀԿ-ներ) հետ՝ բարելավելու տեղական գործարար միջավայրը և այդպիսով ստեղծելու պայմաններ մասնավոր հատվածի վրա հիմված տնտեսական զարգացման և զբաղվածության ապահովման համար, որից շահում են բոլոր համայնքները, ինչպես տեղական, այնպես էլ ազգային մակարդակում: Տնտեսական այս զարգացումը, սակայն, պետք է լինի և՛ էկոլոգիապես, և՛ սոցիալապես կայուն:

Ծրագրի շրջանակում համայնքները պետք է մշակեն կամ համապատասխանեցնեն արդեն գոյություն ունեցող տեղական տնտեսական ծրագրերը՝ պատշաճ կառավարման և պետություն-մասնավոր հատված երկխոսության սկզբունքներին համապատասխան, հստակեցնեն կատարվելիք գործնական քայլերը և վերջնական արդյունքում առաջարկեն նախագծեր, որոնք աջակցում են աճին, զարգացմանն ու զբաղվածությանը: Համայնքների և քաղաքների կառավարման մարմիններն այս գործընթացի շրջանակում պետք է ձգտեն դառնալ ավելի թափանցիկ, ընդգրկուն և առավել բարեհաճ բիզնեսի նկատմամբ:

Սույն նախաձեռնության համար մասամբ հիմք է ծառայել հաջողությամբ իրագործված «Քաղաքապետերի դաշնագիր» նախագիծը, որի առանցքային նպատակը կամավոր հանձնառությամբ Եվրոպական միության կլիմայական և էներգետիկ ստանդարտների ներդրման շուրջ տեղական, ազգային և տարածաշրջանային իշխանությունների համախմբումն է: Կամավոր բնույթի, մասնակցային մոտեցման և հստակ նպատակների շնորհիվ՝ «Քաղաքապետերի դաշնագիր»-ը դարձել է հաջողված նախագիծ Արևելյան գործընկերության տարածաշրջանում:

1 http://www.covenantofMayors.eu/IMG/pdf/High_Level_Conference_CoM_East_Launch_YeFrevan_Press-Release_Final_ENG.pdf
2 Նախաձեռնությունն իրականացվում է ECORYS BV Nederland-ի գլխավորած կոնսորցիումի կողմից՝ GFA Consulting Group-ի, Policy and Management Consulting Group-ի, Noblet Media CIS-ի, VASSR-ի գործընկերությամբ:

Ներդիր 1. «Քաղաքապետերի դաշնագիր»

«Քաղաքապետերի դաշնագիր»

2008թ.-ից սկսած՝ Եվրոպական միության «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությունն աջակցել է տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնք միացել են դաշնագրին և կամավոր հիմունքներով պարտավորվել են մշակել և ներդնել ավելի կայուն էներգետիկ քաղաքականություն համայնքի մակարդակում՝ մեծացնելով վերականգնվող էներգիայի օգտագործումն ու էներգաարդյունավետության միջոցառումները, ինչպես նաև պատրաստվելով կլիմայական փոփոխությունների ազդեցություններին:

2015թ. վերջին մեկնարկեց «Քաղաքապետերի դաշնագիր՝ հանուն կլիմայի և էներգիայի» նոր ինտեգրված ծրագիրը՝ 2030թ. կլիմայական և էներգետիկ նպատակներին հասնելու համար: Այն նպատակ ունի ներառել «Քաղաքապետեր հանուն հարմարվողականության» նախաձեռնությունը՝ ուղղված կլիմայական փոփոխությունների ընդունմանը, և բոլորի համար ապահովել կայուն էներգիայի հասանելիություն: Միասնական գլոբալ ցանցի ձևավորումը քաղաքների պատասխանն էր Փարիզում ստորագրված COP21 համաձայնագրին:

Եվրոպական միության՝ աջակցությունը նախաձեռնությանն ընդլայնվել է և ներկայումս ընդգրկում է՝

- օգնություն Արևելյան գործընկերության երկրներում «Քաղաքապետերի դաշնագրի» քարտուղարության մասնաճյուղին՝ «Քաղաքապետերի դաշնագրի արևելյան գրասենյակ»-ին (ՔԴԳ Արևելք), ինչը ենթադրում է աջակցություն տարածաշրջանի համայնքներին՝ անդամակցելու «Քաղաքապետերի դաշնագրին» և մշակելու ու ներդնելու Կայուն էներգիայի գործողությունների ծրագրեր կամ համանման այլ գործողություններ,

- ցուցադրական նախագծերի ֆինանսավորման դրամաշնորհներ, որոնք ներկայացնում են, թե ինչպես է կայուն գործողությունների իրականացումը լավագույն փորձի փոխանակում ապահովում,

- աջակցություն թիմերին, որոնք կարող են օգնել և ուղղորդել տեղական ինքնակառավարման մարմիններին դրամաշնորհային ծրագրերի կատարման ընթացքում («Քաղաքային կայուն զարգացման ծրագրեր» (ՔԿԶԾ) մեխանիզմ):

Ներկայում Արևելյան գործընկերության շուրջ 150 համայնքներ ստորագրել են Դաշնագիրը և ակտիվորեն աշխատում են իրենց հանձնառությունների կատարման ուղղությամբ:

http://www.euMayors.eu,
http://www.soglasheniemerov.eu

«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության

«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությունն առաջարկում է տեղական տնտեսական զարգացումը կառավարելու մոտեցում, որը վերջին երեք տասնամյակում ապացուցել է իր կարևոր նշանակությունն ամբողջ աշխարհում, մասնավորապես՝ Եվրոպական միությունում: Այն հիմված է հետևյալ նկատառումների վրա՝

- Աշխարհում աշխատատեղերի երեք քառորդը ստեղծվում է մասնավոր հատվածի կողմից: Մասնավոր հատվածի զարգացումն այսպիսով հանգեցնում է տնտեսական ու սոցիալական ավելի լայն զարգացման և զբաղվածության ապահովման:

- Բոլոր շրջանները, քաղաքներն ու բնակավայրերն ունեն յուրօրինակ առավելություններ, որոնք կարող են օգտագործվել աճը, զարգացումն ու զբաղվածությունը խթանելու համար:

- Աճն ու զարգացումը պայմանավորված են մի շարք գլոբալ գործոններով, սակայն դրանց վրա մեծապես ազդում են նաև տեղական ջանքերը: Գլոբալ խաղացողները ներդրում կկատարեն միայն այն վայրերում, որտեղ տեղական պայմանները բարենպաստ են: Հիմքեր կան ենթադրելու, որ ներդրողները փնտրում են «տեղակայման» գործոնների համախումբ, երբ նախընտրում են երկրի մի հատվածում ներդրումներ կատարելու հնարավորությունը մյուսից: Այդ գործոններն են՝ շուկաների հասանելիությունը, մարդկային ռեսուրսների, հողային և հիմնական ենթակառուցվածքների առկայությունը, համագործակցության պատրաստակամ տեղական ինքնակառավարման մարմինները, պատշաճ տեղական ծառայությունները, կյանքի որակը, որը ընկերությունների ղեկավարության ու աշխատակիցների մոտ ցանկություն է առաջացնում ապրել այնտեղ, որտեղ նրանք ներդրումներ են ծավալված, և այլն: Այս գործոններից շատերը ծագել են տեղական մակարդակում ծավալած գործունեության արդյունքում կամ կրում են դրա ազդեցությունը:

- Բարձր արտադրողական և արտահանելի ոլորտներում մասնավոր հատվածի աճը ժամանակի ընթացքում կարող է հանգեցնել տեղական ապրանքների և ծառայությունների ընդհանուր արժեքի բարձրացման: Այդ զարգացումը պայմանավորված է արդյունավետություն փնտրող ներդրումներով, որն էլ, իր հերթին, նպաստում է արտադրողականության բարձրացմանը: Այն հնարավորություններ է ստեղծում ընդլայնելու զարգացմանը նպաստող արտադրական ռեսուրսները (ֆինանսական և մարդկային կարողություններ և տաղանդ), որոնք կարող են նպաստել սոցիալական ծառայությունների ու կյանքի որակի բարելավմանը և մարդկային զարգացման մակարդակի բարձրացմանը:

- Աճի գերակշիռ մասը արդյունք է «ներքևից վերև» գործողությունների, որոնք ձևավորվում են հենց համայնքների ներսում՝ օգտագործելով տեղական ռեսուրսները (մարդիկ, բնական և մշակութային արժեքներ, պատմական և աշխարհագրական առավելություններ և այլն): Սա առավել ակնհայտ է հետևյալ ոլորտների դեպքում՝ զբոսաշրջություն, գյուղատնտեսություն և սննդի վերամշակում, գիտելիքահեն և ստեղծարար ոլորտներ, տեղական արհեստներ, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ծառայություններ, փոքրամասշտաբ արտադրություն ու վերամշակում (որտեղ հումքն ու վերամշակման մեթոդները տեղական են) և այլն:

- Տեղական տնտեսական զարգացումը առավել հաջող է, երբ հիմված է պետություն-մասնավոր հատված գործընկերության վրա: Թեև տեղական ինքնակառավարման մարմիններն ու գործարարները տեղական տնտեսական զարգացման հիմնական դերակատարներն են, այնուամենայնիվ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ու տեղական համայնքները ևս կարևոր դեր են խաղում: «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության մոտեցման համաձայն՝ նշված կողմերի միջև համագործակցությունը հետագայում կանվանվի «Տեղական տնտեսական զարգացման համագործակցություն»:

- Տեղական արտադրության և ծառայությունների ոլորտի աճը ստեղծում է կարողություններ և պայմաններ, որոնք, իրենց հերթին, հնարավորություն են ընձեռում զարգացնել մանրածախ առևտուրը, սպառումը, շինարարությունը և տեղական այլ ծառայությունները՝ խթանելով զբաղվածությունը: Հաջողությունների շնորհիվ շրջանները դառնում են ավելի գրավիչ, որտեղ մարդիկ ցանկանում են ապրել, աշխատել, այցելել և ներդրումներ կատարել: Դրական կերպարը տվյալ վայրը դարձնում է գրավիչ, իսկ նախագծերը՝ դինամիկ և հրապուրիչ: Սրանք ոչ նյութական գործոններ են, որոնք բարենպաստ պայմաններ են ստեղծում ձեռներեցության և ներդրումների, հետևաբար նաև՝ աշխատատեղերի ստեղծման համար:

- Ժամանակակից տնտեսություններում աճն ու զարգացումը խթանում են ոչ թե բնական կամ աշխարհագրական գործոնները, այլ կազմակերպությունները, նորարարությունը, առաջնորդությունը և կրթությունը: Տեղական տնտեսական զարգացումը վերաբերում է այս պայմանների ստեղծմանը տեղական մակարդակում, և խելացի ու արդյունավետ համայնքները կարող են հասնել դրան:

Նպատակները

«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» հիմնական նպատակն է աջակցել Արևելյան գործընկերության երկրների տեղական ինքնակառավարման մարմիններին՝ դառնալու տեղական մակարդակում տնտեսական զարգացման և աշխատատեղերի ստեղծման ակտիվ նախաձեռնող, ինչպես նաև ապահովելու տնտեսական, սոցիալական, մշակութային զարգացման համար հնարավորությունների ստեղծումը, համայնքների բարեկեցության և կենսամակարդակի բարձրացումը:

Նախաձեռնության անմիջական նպատակն է զարգացնել ծրագրին մասնակից տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց գործընկերների (մասնավոր հատված և քաղաքացիական հասարակություն) հնարավորությունները՝ ձգտելով.

- Աջակցել և խրախուսել տեղական ինքնակառավարման մարմիններին և նրանց գործընկերներին՝ մշակելու և իրագործելու Տեղական տնտեսական զարգացման ծրագրեր, որոնք, համաձայն եվրոպական լավագույն փորձի և մոտեցումների, բացահայտում են աճի հիմնական նախադրյալները:

- Բարելավել տեղական ինքնակառավարման մարմինների տեխնիկական հմտությունները, ինչպես նաև տեղական տնտեսական՝ զարգացման ծրագրերի իրագործման համար պահանջվող կարողությունները՝ համատեղելով դրանք պատշաճ կառավարման և ողջամիտ ֆինանսական կառավարման սկզբունքների հետ:

- Խթանել պետություն-մասնավոր հատված երկխոսության վրա հիմված տեղական համագործակցությունների և ցանցերի ստեղծումը՝ աճի, զարգացման և զբաղվածության մեծացմանն ուղղված ծրագրերի իրագործման համար:

- Զարգացնել և տարածել նորարարություններն ու լավագույն փորձը՝ տեղական զարգացման դերակատարներին մոտիվացնելու, նոր գործնական մոտեցումները աշխատանքում կիրառելու և զարգացմանն ուղղված տեղական քաղաքականություններն ու գործողությունները պահպանելու համար:

«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությունն իր գործընկերներին առաջարկում է մոտեցում, որը համայնքներին կօգնի՝

- հասկանալ տնտեսական իրադրության բարելավման իրենց ներուժը,
- ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, որոնք կբարձրացնեն դրական փոփոխություններ կատարելու իրենց ներուժը,
- ստեղծել սեփական պահանջներին համապատասխան լուծումներ, որոնք կօգնեն դրական փոփոխությունների իրագործմանը,
- ձեռնարկել զարգացմանն ուղղված գործողություններ և գնահատել ձեռք բերված արդյունքները:

Բարի գալուստ «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» ակումբ

Միանալով «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությանը՝ համայնքները կկարողանան օգտվել բացառիկ աջակցման ծառայություններից, բարձրակարգ մասնագիտական օժանդակությունից և ստորև ներկայացված այլ հնարավորություններից: Ծրագրին միանալը նրանց կդարձնի համայնքների առաջատար պրոֆեսիոնալ ցանցի անդամ, որը բոլոր մասնակիցներին առաջարկում է տնտեսական, քաղաքական օգուտներ և հեղինակության բարձրացում, մասնավորապես՝

- Տեղական տնտեսական զարգացման ծրագրերի մշակման և իրագործման ընթացքում փորձագիտական աջակցություն,
- Տեղական տնտեսական զարգացման բնագավառում միջազգային խորհրդատվության և փորձագետների անվճար հասանելիություն,
- Հստակ նախագծերի հայտնաբերման ու մշակման օժանդակություն և աջակցություն դրանց իրականացման ընթացքում,
- Ներդրումներ ներգրավելու նպատակով՝ ձեռք բերված արդյունքների հաղորդակցման աջակցություն,
- Դրամաշնորհների որոնման և ներդրումային ծրագրերի նախապատրաստման աջակցություն,

- Միջազգային ֆինանսական հաստատությունների և պոտենցիալ ներդրողների հետ կապի հաստատում,
- Տեղական գործընկերների, մասնավորապես՝ առևտրային կազմակերպությունների, կրթական և գիտական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների ակտիվ ներգրավում,
- Կապեր այլ երկրների համայնքների և արտասահմանյան գործընկերների հետ,
- Արևելյան գործընկերության երկրների տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության ամրապնդում,
- Աշխատակիցների փոխանակման գործիքներ,
- Վերապատրաստումներ, ուսուցողական շրջագայություններ և թեմատիկ գործնական պարապմունքներ համայնքային աշխատակիցների և տեղական գործընկերների համար,
- Համապատասխան տեղեկատվության հասանելիություն և տարածում,
- «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» ակումբի անդամակցություն,
- Մասնակից համայնքների կողմից «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության բրենդի կիրառում՝ ներքին և արտաքին դիրքավորման նպատակով:

Եվրոպական միությունը («Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Քարտուղարության քարտուղարության միջոցով) և մյուս գործընկերները (օր.՝ Համաշխարհային բանկը) պարտավորվում են ավելացնել տեղական գործընկերների կարողություններն ու ընդլայնել իրենց հնարավորությունները՝ կայուն տեղական տնտեսական զարգացումը խթանելու համար:

Տեղական տնտեսական զարգացումը «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման հետ

«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության համատեքստում տնտեսական զարգացումը տեղական մակարդակում կնախաձեռնվի և կհամակարգվի համայնքային իշխանության կողմից և ուղղված կլինի աճին, զարգացմանն ու աշխատատեղերի ստեղծմանը: Սա ենթադրում է հետևյալ գործողությունները՝

- Համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև (Տեղական տնտեսական զարգացման համագործակցություն),
- Պահանջարկի վրա հիմված աջակցություն փոքր ընկերություններին և գործող կամ պոտենցիալ անհատ ձեռներեցներին,
- Ջանքերի կենտրոնացում զարգացման վրա՝ արտաքին գործոններին կամ կառավարման բարձր օղակների նախաձեռնություններին ապավինելու փոխարեն,
- Գործնական և թիրախային մոտեցում, որն արտահայտվում է կոնկրետ գործողություններով՝ հիմնականում փոքր, սակայն մշակված որպես համաձայնեցված ծրագրի մի մաս,
- Երկխոսության և մոնիտորինգի միջոցով ծրագրերի շարունակական փոփոխություն ու համապատասխանեցում տեղական կարիքներին,

- Համագործակցություն ինչպես համայնքի ներսում, այնպես էլ այլ համայնքների, պետական այլ մարմինների և կառավարման բարձր օղակների միջև,
- Կենտրոնացում ժամանակի ընթացքում ավելացող արդյունքների վրա, որոնք ընկալվում են որպես տվյալ տարածաշրջանի ակնհայտ ձեռքբերումներ աճի, զարգացման և աշխատատեղերի ստեղծման տեսանկյունից:

Արևելյան գործընկերության վեց երկրներում համայնքային կառավարման մոդելներն ունեն որոշակի տարբերություններ, սակայն բոլոր դեպքերում էլ պետությունը, նախարարություններն ու գերատեսչությունները, ինչպես նաև տարածաշրջանային որոշ իշխանություններ, ակտիվորեն ներգրավված են տնտեսական զարգացումը խթանելու գործընթացների մեջ: «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» տեղական տնտեսական զարգացման ջանքերը կուղղվեն տարածաշրջանային և ազգային այդ դերակատարներից շատերի ներգրավմանը՝ ի շահ տվյալ համայնքի զարգացմանը, սակայն տեղական տնտեսական զարգացման հիմական շրջանակն ու կենտրոնացումը կլինի այն գործոնների վրա, որոնք ուղղակիորեն ազդում են աճի, զարգացման և աշխատատեղերի ստեղծման վրա և միևնույն ժամանակ կախված են համայնքի գործողություններից:

Արևելյան գործընկերության շատ երկրներ ազգային կամ տարածաշրջանային զարգացումը պլանավորելու բավական մեծ փորձ ունեն, որը ժառանգել են պլանային տնտեսության անցյալից կամ զարգացրել են վերջին 10-15 տարում՝ դոնոր կազմակերպությունների աջակցությամբ: Բոլոր այն վայրերում, որտեղ իրականացվում են համանման ծրագրեր, «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությունը կհենվի արդեն ձեռք բերված արդյունքների վրա և կշարունակի զարգացնել դրանք հետագայում:

«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության հիմասյունները

«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» ծրագրի շրջանակում համայնքներին ու մասնավոր հատվածում նրանց գործընկերներին խորհուրդ է տրվում՝ կենտրոնանալ այն կարևոր հարցերի («հիմասյուների») ուղղությամբ, որոնք տեղում մասնավոր հատվածի զարգացման հիմական նախապայմաններն են:

Գծապատկեր 1.
«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» հիմասյունները



Տեղական համագործակցություն և կապերի հաստատում

Պետություն-մասնավոր հատված տեղական համագործակցությունը տեղական տնտեսական զարգացման առանցքային գործոնն է: Համայնքներն ունեն նման համագործակցություն նախաձեռնելու բոլոր հնարավորությունները, որը հիմականում անհրաժեշտ է հետևյալ ոլորտներում՝

- *Գիտելիք և հմտություններ* (համայնքներ - տեղական մասնագիտական կրթության և դասընթացների կազմակերպիչներ - ընկերություններ),
- *Բիզնես ենթակառուցվածքներ* (համայնքներ – բիզնեսին աջակցող ծառայություններ – ընկերություններ և անհատ ձեռներեցներ), մասնավորապես՝ տնտեսության այնպիսի ոլորտներում, որտեղ գործողությունները պետք է մանրակրկիտ կերպով պլանավորվեն, համատեղ մշակվեն և հաջորդաբար իրականացվեն (օր.՝ զբոսաշրջություն, գյուղատնտեսություն և վերամշակող արդյունաբերություն, ՏՏ, արվեստ և մշակույթ, փոքր արտադրություն, նորարարություն և այլն):

Տեղական տնտեսական զարգացման հաջողության պատմությունները (դրանցից որոշները ներկայացված են ստորև) մեծ մասամբ հիմված են **պետություն-մասնավոր հատված երկխոսության և գործընկերության վրա:** Խոշոր համայնքները՝ հիմնականում քաղաքները, կարող են նպաստել նորարարության ոլորտում «եռակի պարույրի» ձևավորմանը (բիզնես – պետական հատված – ակադեմիական և հետազոտական ինստիտուտներ):

Բիզնեսին աջակցող, թափանցիկ և առանց կոռուպցիայի վարչարարություն

Տեղական ինքնակառավարման մարմնի հիմնական գործառույթներից մեկը համայնքային այլ դերակատարների՝ մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության համար գործունեության միջավայրի հիմնումն ու պահպանումն է: Որքան բաց, կանխատեսելի և թափանցիկ է միջավայրը, այնքան ավելի կենսունակ, արդյունավետ և առողջ է ամբողջ համակարգը:

Թեև չափազանց կարևոր է, թե ԻՆՉ կանոններ ու դրույթներ են գործում տեղական տնտեսական զարգացմանը վերաբերող ոլորտներում (այս թեմային անդրադարձ կկատարվի հաջորդ ենթաբաժնում), այնուամենայնիվ, վճռական է, թե ԻՆՉՊԵՍ են այս կանոններն ու դրույթները կիրարկվում: Զրո հանդուրժողականությունը կոռուպցիայի նկատմամբ, ինչպես նաև պատշաճ կառավարման սկզբունքների հանձնառությունը (օր.՝ մասնակցություն, համընդգրկունություն, պատասխանատվություն և օրենքի գերակայություն) **նախադրյալներ են ստեղծում** մեծացնելու գործարարների հավատը, քաղաքացիական հասարակության վստահությունը և ընդհանուր բավարարվածության մակարդակը համայնքի ներսում:

Տեղական շահագրգիռ կողմերից բացի, միջազգային խաղացողները, օրինակ՝ օտարերկրյա ներդրողներն ու դոնոր կազմակերպությունները, չափազանց զգայուն են պետական մարմինների հանրային կերպարի նկատմամբ և համագործակցության որոշում կայացնելիս այն համարում են կարևոր **գործոն**:

Կարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակ

Թեև գործարար միջավայրի հիմնական կարգավորումները սահմանվում են կառավարության կողմից, սակայն որոշ դեպքերում տեղական ինքնակառավարման մարմինները կարող են կարևոր դեր խաղալ տեղական ընկերություններին վերաբերող նորմատիվ պահանջների սահմանման հարցում (օր.՝ ընկերության գրանցման գործընթաց, տեղական հարկերի կիրառում և այլն): Տեղական իշխանությունները նաև որոշակի վերահսկողություն են իրականացնում պլանավորման գործընթացի վրա (**պլանավորման թույլտվություն,** հողօգտագործում ու վարձակալություն և այլն):

Որոշ համայնքներ կարող են նաև պատասխանատու լինել տարբեր կարգավորումների կիրառման համար, որոնք կարող են գործառնական ծախսեր հանդիսանալ բիզնեսի համար՝ հակահրդեհային միջոցների տեսչական ստուգումներ, սանիտարահիգիենիկ ստուգումներ, առողջության ու անվտանգության կանոններ և այլն: Այս ծառայությունների մատուցումը, բնականաբար, պետք է լինի օրենքին համապատասխան, արդյունավետ, արդար և թափանցիկ, միաժամանակ՝ հնարավորինս պարզ և ոչ բյուրոկրատական:

Կարևոր է, որ յուրաքանչյուր ձեռներեց, առանց երկար ճանապարհ անցնելու, համայնքի տարածքում կարողանա ստանալ բիզնեսի ընդլայնման համար անհրաժեշտ աջակցություն, և վստահ լինի, որ իր կարիքները հաշվի կառնվեն անկողմնակալ և օբյեկտիվ կերպով:

Այս ամենը ենթադրում է **բիզնեսին աջակցող ծառայությունների** արդյունավետ համակարգ, որն ակտիվորեն կաջակցի գործարարներին: Այն կարող է մասնավորապես, բայց ոչ բացառապես ներառել հետևյալ ծառայությունները՝

- *Տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների մատուցում (արտադրանքի և շուկայի մասին տեղեկատվություն, պրոֆեսիոնալ խորհրդատվություն և այլն),*
- *Աջակցություն տնտեսվարող սուբյեկտների համագործակցությանը և բիզնես կլաստերների ձևավորմանը,*
- *Աջակցություն տեղական արժեշղթաների զարգացմանը:*

Այս ծառայությունները, կախված տեսակից, կարող են մատուցվել պոտենցիալ ձեռներեցներին կամ ներդրողներին, փոքր բիզնեսներին կամ ընկերությունների խմբերին: Անգամ եթե համայնքներն իրենք չեն մատուցում այս ծառայությունները, ապա կարող են օգտագործել իրենց լիազորությունները՝ տվյալ շրջանում **ծառայությունների մատուցումը զարգացնելու և հեշտացնելու նպատակով:**

Համայնքներում վարչական շատ ծառայություններ կարող են վերաբերել գործարարությանը կամ ուղղված լինել հենց բիզնեսին, սակայն կարևոր է, որ համայնքային իշխանությունը բոլոր դեպքերում բիզնեսին աջակից լինի, վայելի իր ընտրողների ու տնտեսվարող սուբյեկտների վստահությունը և հանդես գա հանրային շահերից: Համայնքի կողմից մատուցվող ծառայությունները պետք է լինեն արագ, որակյալ, թափանցիկ և օգտակար ձեռներեցների ու ներդրողների համար: Այս պայմաններին հասնելու համար տեղական ինքնակառավարման մարմինները պետք է գնահատեն իրենց կողմից մատուցվող ծառայությունների որակը և հնարավորության դեպքում վերանայեն դրանք՝ մասնավոր հատվածից ստացված հետադարձ կարծիքի հիման վրա:

Ֆինանսական միջոցների հասանելիություն

Գործարարների, հատկապես՝ փոքր ձեռնարկությունների գլխավոր խնդիրը հաճախ ֆինանսական միջոցների և հնարավոր ֆինանսավորման մասին տեղեկատվության հասանելիությունն է: Համայնքները կարող են տրամադրել **տեղեկատվական և բիզնեսին աջակցող ծառայություններ,** որով կտեղեկացնեն ձեռներեցներին ֆինանսավորման առկա հնարավորությունների մասին՝ միկրովարկավորման սխեմաներ, ձեռներեցության

աջակցությանն ուղղված ազգային ծրագրեր, դոնոր և միջազգային ֆինանսավորման մեխանիզմեր և այլն:

Կան նաև ուղիներ **տեղում մատուցվող ֆինանսական ծառայությունների դաշտը զարգացնելու համար** կամ ստեղծելու նախադրյալներ՝ ֆինանսավորման նոր հնարավորությունների ներգրավման համար. օգտագործել համայնքի միջոցները տեղական ձեռներեցների վարկավորման մեխանիզմերն ամրապնդելու համար, ոչ առևտրային կառույցում հիմնել վարկավորման մեխանիզմեր (օր.՝ վարկային միավորումներ կամ վարկային խորհուրդ), խրախուսել մասնավոր բանկին նոր մասնաճյուղ բացել տվյալ համայնքում կամ խրախուսել տեղական բանկին՝ դիվերսիֆիկացնել իր ծառայությունների առաջարկը:

Հող և ենթակառուցվածքներ

Բոլոր տեսակի և չափերի բիզնեսները տարածքների և ժամանակակից հարմարությունների կարիք ունեն, որտեղ կկարողանան իրականացնել իրենց գործունեությունը՝ արհեստանոցներ, գրասենյակներ, արտադրական ու սպասարկման օբյեկտներ և այլն: Համայնքները կարող են **ապահովել հողատարածք** նման հարմարությունների համար կամ նախաձեռնել ու խրախուսել նման հարմարություններ ստեղծելու ջանքերը:

Բիզնես ենթակառուցվածքներ են աշխատանքային տարածքները, բիզնես ինկուբատորները, արդյունաբերական գոտիները (նոր և գործող), գիտական կամ տեխնոլոգիական պարկերը և այլն: Այս ոլորտում կյանքի կոչվող ծրագրերը կարող են լինել մեծ, համալիր և ռիսկային, ուստի անհրաժեշտ է, որ համայնքն ու մասնավոր հատվածը համատեղ աշխատեն, որպեսզի այդ հարմարությունները լինեն **կիրառելի, օգտակար և տնտեսապես ու ֆինանսապես կենսունակ:** Այս տարածքները պետք է առնվազն ապահովեն բազային կոմունալ հարմարությունների (ջուր, էլեկտրաէներգիա, գազ) և հիմնական ծառայությունների (հեռախոս, ինտերնետ) հասանելիություն:

Համայնքները կարող են **առանձնացնել չօգտագործվող հողատարածքները կամ շինությունները,** որոնք հարմար են բիզնեսի գործունեության համար և կարող են վերազինվել կամ վերականգնվել հետագա օգտագործման համար: Հատուկ տարածքները կարող են վաճառվել պոտենցիալ ներդրողներին և գործունեությունը մի տարածքից այլ տեղ տեղափոխող ընկերություններին:

Հմտություններ և մարդկային կապիտալ, ներառականություն

Թեև աշխատանքի տեղավորման տեղական գործակալությունները չեն կարող ղեկավարվել համայնքային իշխանությունների կողմից, այնուամենայնիվ, համայնքը կարող է հանդես գալ որպես ձեռնարկությունների, աշխատանքի տեղավորման տեղական գործակալությունների ու մասնագիտական կրթության և վերապատրաստման ոլորտի միավորման նախաձեռնող

և միջնորդ՝ ընկերություններին համապատասխան որակավորմամբ աշխատակիցներ ապահովելու նպատակով:

Այս ոլորտում իրականացվող հատուկ գործողությունները կարող են ներառել **աշխատանքի տեղավորման ծառայությունները** (օր.՝ ընկերություններին հարցնել, թե ինչ որակավորման կադրերի պակաս ունեն, տարածք հատկացնել, որտեղ թափուր աշխատատեղերը կարող են անվճար գովազդվել, կամ գործազուրկ մարդկանց տեղեկացնել աշխատանքի համապատասխան հնարավորությունների մասին և այլն) և **մասնագիտական վերապատրաստման դասընթացները** (օր.՝ ընկերությունների կողմից վերապատրաստման դասընթացների, ընկերություններում պրակտիկաների կազմակերպում և այլն):

Համայնքներում ձեռներեցության ներուժի բացահայտումը չափազանց կարևոր է: Սրան կարելի է հասնել փոքր և միջին ձեռնարկությունների (անհատ ձեռներեցներ) համար նպաստավոր միջավայրի ստեղծման և բիզնեսի աջակցման ծառայությունների մատուցման խրախուսման միջոցով, ներառյալ այն ծառայությունները, որոնք **բավարարում են խոցելի համարվող խմբերի՝ կանանց և երիտասարդների կարիքները:**

Համայնքները կարող են նաև աշխատել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ և զարգացնել սոցիալ-տնտեսական ապահովության համակարգերը, որպեսզի ծառայությունները հասանելի լինեն հատկապես այն խմբերին, որոնք չեն կարող հեշտությամբ մասնակցել վերապատրաստումների ու մուտք գործել աշխատանքի շուկա (օր.՝ երիտասարդների համար պրակտիկաներ, հատուկ պայմաններ, որոնք հեշտացնում են կանանց կամ անապահով խմբերի կամ փոքրամասնությունների ներկայացուցիչների աշխատանքի տեղավորումը և այլն): Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են նաև աշխատանքի տեղավորման և փորձի կուտակման հնարավորություններ ապահովել այն խմբերի համար, որոնք դժվարություններ ունեն աշխատաշուկայի և դրա աջակցման համակարգերի հասանելիության հարցում:

Արտաքին դիրքավորում և մարքեթինգ

Համայնքի կառավարման մարմինը՝ ի դեմս համայնքի ղեկավարի, լիազորված է ներկայացնել, մշակել և նախագծել իր համայնքի դրական և բիզնեսին աջակցող կերպարը: Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից պատշաճ կառավարման, թափանցիկ և պատասխանատու գործելակերպի հանձնառությունը տվյալ տարածաշրջանի հանրային կերպարի կարևորագույն տարրերն են: Կերպարը պետք է ընդգծի տվյալ տարածաշրջանի դրական և գրավիչ կողմերը՝ կենտրոնանալով այդ տարածքում **բնակվելու, աշխատելու, այցելելու և ներդրումներ կատարելու ծանրակշիռ հիմքերի** վրա:

Այս մոտեցումների զարգացումը պահանջում է պետություն-մասնավոր հատվածի և համայնքի համախմբված ջանքերի գործադրում, ինչպես նաև **«հետներդրումային աջակցության»** ծառայությունների զարգացում այն ներդրողների համար, որոնք արդեն գործում են համայնքում, որպեսզի նրանք շարունակեն մնալ համայնքում և ներդրումներ կատարեն: Արտաքին դիրքավորման համար կարևոր է նաև բնակիչների համար կյանքի ապահով և բարենպաստ միջավայրի ստեղծումը: Բացի այդ, համայնքները կարող են շուկայահանել տեղական ապրանքներն ու ծառայությունները:

Երբեմն անհրաժեշտ է ֆիզիկական կամ բնական միջավայրում և **կյանքի որակում** կատարել փոքր, սակայն կերպարի բարելավմանը միտված **փոփոխություններ:** Ընդհանուր առմամբ, համայնքի ղեկավարները՝ պետք է աշխատեն ներդրումների խթանման ազգային գործակալությունների հետ՝ համոզվելու, որ իրենց համայնքը գտնվում է երկրով հետաքրքրվող ներդրողների ուշադրության կենտրոնում: Համայնքի ղեկավարները կարող են օգտագործել սեփական կապերը երկրում և արտասահմանում՝ տեղական ձեռնարկությունների համար նոր շուկաներ և բիզնես համագործակցության հնարավորություններ ապահովելու համար:

Տեղական տնտեսական զարգացման հաջողության պատմություններ

Տեղական տնտեսական զարգացումը տեղական համագործակցության օրինակ է, որի շրջանակում մշակվում և իրագործվում են Ծրագրին համահունչ և փոփոխություններ բերող գործողություններ ու նախագծեր: Քանի որ Ծրագիրը հիմված է գործընկերության վրա, գործողությունները ևս հիմված են գործընկերային և ինտեգրված մոտեցման վրա: Ծրագրի միջոցով կարող են ստացվել լրացուցիչ սիներգիաներ, որին հնարավոր չէր լինի հասնել մեկուսացված գործողությունների դեպքում: Հետևյալ բոլոր օրինակները վերցված են Եվրոպական միությանը նոր անդամակցած կամ թեկնածու երկրներից և ցույց են տալիս, թե ինչ արդյունքների կարելի է հասնել համատեղ ջանքերով:

Օրլիկո
Չեխիայի Հանրապետություն
2000-2004 թթ.

մոտ
30,000
բնակիչ



Սկզբնական իրավիճակ. Օրլիկոն գյուղական տարածաշրջան է Չեխիայի արևելյան հատվածում և ներառում է մի շարք փոքր քաղաքներ ու գյուղեր: Գտնվելով լեռնային և անտառածածկ տարածքում՝ համայնքն ի սկզբանե ուներ ցածր արտադրողականությամբ գյուղատնտեսություն և մի քանի միջին չափի գործարան:

Տեղական տնտեսական զարգացման խնդրի լուծում.

1. Երեք համեմատաբար խոշոր համայնքների ղեկավարներ հիմնեցին տեղական ասոցիացիա, որի նպատակը **զբոսաշրջության զարգացման խթանումն էր,**
2. «Չեխական երկաթուղու» հետ համագործակցությամբ հիմնվեց **Զբոսաշրջության տեղեկատվական կենտրոն,**
3. Մշակվեցին **զբոսաշրջային նոր պրոդուկտներ** (մագլցում, հեծանվավազք, կանոեի վարում, ձիավարություն) և կառուցվեցին համապատասխան **ենթակառուցվածքներ** (հեծանվային ուղիներ, լեռնագնացության արահետներ, մագլցման արահետներ, ձիավարության կենտրոններ):

Արդյունքը. Օրլիկոն այժմ զբաղվում է հազարավոր զբոսաշրջիկների, որոնք օգտվում են տեղի զբոսաշրջային բազմաթիվ օբյեկտներից և ավելացնում տեղական եկամուտները: Արդյունքում շահում են համայնքները, հյուրանոցների տերերն ու մանրածախ առևտրով զբաղվողները:

Աշխատանքի հիմնասյուները.

- Տեղական համագործակցություն և կապերի հաստատում
- Բիզնեսին աջակցող, թափանցիկ և առանց կոռուպցիայի վարչարարություն
- Արտաքին դիրքավորում և մարքեթինգ
- Ֆինանսական միջոցների հասանելիություն
- Հող և ենթակառուցվածքներ

Զրենյանին
Սերբիայի Հանրապետություն
2003-2007 թթ.

մոտ
70,000
բնակիչ

Սկզբնական իրավիճակ. Զրենյանինը նախկինում ուներ անհրապույր կենտրոն և թույլ զարգացած ծառայություններ:

Տեղական տնտեսական զարգացման խնդրի լուծում.

1. Քաղաքը 2002թ.-ին միացավ **դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորված տնտեսական զարգացման ծրագրին,** որի ներքո մշակեց Տեղական տնտեսական զարգացման պլան (2003-2007):
2. Համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ հիմնադրվեց **Բիզնեսի բարելավման շրջանային միություն** ձեռներեցների, խանութների և քաղաքի հին թաղամասի շենքերի սեփականատերերի կողմից:
3. Մոտ 200 ձեռնարկություն միացավ ասոցիացիային, որը հետագայում **ներգրավեց ֆինանսական միջոցներ** (այդ թվում՝ **քաղաքապետարանի աջակցությամբ**) և բարելավեց տների ու հասարակական վայրերի ճակատային մասերը, քաղաքի կենտրոնում կազմակերպեց միջոցառումներ և ձեռնարկեց մարքեթինգային գործողություններ՝ ավելի շատ զբոսաշրջիկներ ու այցելուներ ներգրավելու համար:

Արդյունքը. Մինչև 2007 թվականը տեղական ընկերությունների վաճառքներն ավելացան, և քաղաքի կենտրոնի անշարժ գույքի ընդհանուր գները բարձրացան: Այս դինամիկան շարունակվում է մինչ օրս:

Աշխատանքի հիմնասյուները.

- Տեղական համագործակցություն և կապերի հաստատում
- Բիզնեսին աջակցող, թափանցիկ և առանց կոռուպցիայի վարչարարություն
- Ֆինանսական միջոցների հասանելիություն
- Հող և ենթակառուցվածքներ
- Արտաքին դիրքավորում և մարքեթինգ

Տրնավա

Սլովակիայի Հանրապետություն

2002-2006 թթ.

մոտ

70,000

բնակիչ

Սկզբնական իրավիճակ. Տրնավան ուներ գործազրկության բարձր մակարդակ, իսկ տեղական տնտեսության բարեփոխումներն ընթանում էին շատ դանդաղ:

Տեղական տնտեսական զարգացման խնդրի լուծում.

1. Քաղաքը ձևավորեց **աշխատանքային խումբ**՝ ներդրողների հետ բանակցելու նպատակով:
2. **Համայնքի ղեկավարն ու նրա տեղակալը ղեկավարեցին այս գործընթացը**՝ ներառելով նաև **այլ գործընկերների** (աշխատանքի տեղավորման տեղական գործակալություններ, պետական կառավարման մարմիններ, պլանավորման բնագավառում տեղական իշխանության մարմիններ և ենթակառուցվածքային ծառայությունների մատակարարներ):
3. Peugeot-Citroën-ը (PSA) 2003-ին ցանկություն հայտնեց Սլովակիայում ներդրում կատարել, և **քաղաքը որոշեց բաց չթողնել այս հնարավորությունը:** Աշխատանքային խումբն **առանձնացրեց հարմար հողատարածքներ** և բանակցեց դրանց սեփականատերերի հետ՝ արդյունաբերական մեծ օբյեկտ ստեղծելու համար: Խումբն օգնեց նաև ստանալ **շինարարության թույլտվություն** և կապ հաստատեց ինչպես պետական մարմինների, այնպես էլ ներդրողի հետ:

Արդյունքը. Քաղաքը ստացավ 25 մլն եվրո դրամաշնորհ՝ արդյունաբերական օբյեկտի կառուցումը նախապատրաստելու և հիմնական ենթակառուցվածքներն ապահովելու համար: PSA-ն Տրնավայում սկսեց գործել 2006թ.-ից, իսկ տարածքային ընդլայնման որոշումը կայացվել էր 2005թ.-ին: PSA գործարանը ներկայում Տրնավայում արտադրում է տարեկան շուրջ 300,000 մեքենա և ունի մոտ 5,000 աշխատակից:

Աշխատանքի հիմնասյուները.

- Տեղական համագործակցություն և կապերի ստեղծում
- Բիզնեսին աջակցող, թափանցիկ և առանց կոռուպցիայի վարչարարություն
- Կարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակ
- Ֆինանսական միջոցների հասանելիություն
- Հող և ենթակառուցվածքներ
- Հմտություններ և մարդկային կապիտալ, ներառականություն
- Արտաքին դիրքավորում և մարքեթինգ

Այս երեք օրինակները ցույց են տալիս, որ առաջնորդությունը, գործընկերությունն ու կազմակերպվածությունն առաջնային նշանակություն ունեն հաջողված տեղական տնտեսական զարգացում ունենալու համար, և որ համայնքն ու համայնքի ղեկավարն են փոփոխություններ նախաձեռնողը:

- Համայնքի ղեկավարներն ու համայնքները կարող են նպաստել տեղական տնտեսական զարգացմանը: Նրանք ունեն լեգիտիմության մակարդակ, որը նրանց թույլ է տալիս համագործակցել այլ պետական մարմինների հետ և ներկայացնել իրենց մասնավոր հատվածի շահերը:
- Երկխոսությունն ու գործընկերությունը հանգեցնում են արդյունքի, և ընդհակառակը, կայուն արդյունքի չի հասնում այն տարածաշրջանը, որտեղ կողմերն աշխատում են մեկուսացված:
- Համայնքները պետք է աշխատեն պետական այլ մարմինների հետ, քանի որ չունեն օրենսդրական և տեխնիկական ներուժ՝ միայնակ գործելու համար:

Ինչպե՞ս է «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությունը աշխատելու

«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությունը նախատեսում է փուլային մոտեցում: այն ներառում է քայլ առ քայլ մոտեցում, ինչը համայնքային իշխանություններին առաջնորդում է մի ճանապարհով, որը բաղկացած է մի քանի առանձին փուլերից: Յուրաքանչյուր համայնք այս փուլերն անցնելու է սեփական արագությամբ և իր կատարած ընտրության հիման վրա: Որոշ համայնքներ, հնարավոր է, նախնական փուլում արագ առաջընթաց գրանցեն, եթե արդեն ներգրավված են տեղական տնտեսական զարգացման պլանավորման գործում կամ ունեն համապատասխան ծրագիր:

Այս գործընթացի շրջանակում Ծրագրին միացած համայնքները կստանան անդամության կարգավիճակ՝ **«Սկսնակ», «Գործող» և «Պատվավոր»,** որոնք կարտացոլեն «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության շրջանակում նրանց առաջընթացն ու ձեռքբերումները:
Ստորև ներկայացված գծապատկերն ընդհանուր պատկերացում է տալիս գործընթացի տարբեր փուլերի մասին:

Գծապատկեր 2. «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» գործընթացը



«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» փուլերը

Գրանցում

«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Քարտուղարությունը պետք է համոզվի, որ պոտենցիալ մասնակիցները լիարժեք տեղեկացված են ծրագրի ընձեռած հնարավորությունների, ինչպես նաև այն հանձնառությունների մասին, որոնք համայնքները ստանձնում են:

Ծրագրին մասնակցելու համար համայնքները պետք է բավարարեն մի քանի նախապայմանի: Նախ, նրանք պետք է ներկայացնեն պաշտոնական փաստաթուղթ, որը վկայում է որոշման շուրջ ընդհանուր համաձայնության մասին և հիմնված է քաղաքացիական հասարակության, մասնավոր և պետական հատվածի հետ քննարկումների վրա: Այս գործընթացը, որը պետք է ներառի «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» գործընթացներին ու հանձնառություններին վերաբերող քննարկումներ, հիմնականում կազմակերպում է համայնքի ղեկավարը: Այս փուլում պետք է ձևավորվի **Տեղական տնտեսական զարգացման գործընկերություն,** որը հանդես է գալու որպես շարժիչ ուժ և ապահովելու է «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության նկատմամբ տեղական հանձնառությունը:

Համայնքի ղեկավարից բացի, անհրաժեշտ է աշխատակազմի մեկ այլ անդամ, որը կվարի և կփաստաթղթավորի տեղական տնտեսական զարգացման պլանավորման և հաշվետվողականության գործընթացները և Քարտուղարության համար կհանդիսանա կոնտակտային անձ:

Նախաձեռնության Սկսնակ անդամ դառնալու և Ծրագրի տրամադրած աջակցությունից օգտվելու համար համայնքի ղեկավարը պետք է ստորագրի և Քարտուղարություն ներկայացնի «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությանն անդամակցելու (Տե՛ս **Հավելված 1**) ձևաթուղթը:

1-ին փուլ. Պլանավորման մեկնարկ

Առաջին փուլը վերլուծության առումով բավական ինտենսիվ է և կարող է մի քանի ենթափուլի բաժանվել:

Նախ, անհրաժեշտ է վերլուծել տեղական տնտեսության կառուցվածքը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով արդյունաբերության, գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտում **տեղական մասնավոր հատվածի վրա:** Մասնավոր հատվածը տեղական տնտեսության հիմքն է և ապահովում է հիմնական աշխատատեղերը: Կարևոր են հատկապես բարձր արտադրողական և այն ծառայությունների ոլորտները, որոնք կարող են վաճառվել համայնքի տարածքից դուրս: Այս վերլուծության միջոցով կորոշվեն առավել խոստումնալից հատվածները, ենթաճյուղերն ու նեղ ոլորտները, որոնք կարող են ծառայել որպես տեղական աճի շարժիչներ: Վերլուծությունը կսահմանի նաև այն հիմնական չափանիշները, որոնց պետք է համապատասխանեն տեղական տնտեսական զարգացման հիմնական թիրախները:

Տնտեսական այս վերլուծությանը պետք է հաջորդի «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» հիմնասյուների վերլուծությունը՝ կենտրոնանալով այն խնդիրների վրա, որոնք առավել համապատասխանում են տվյալ համայնքին կամ քաղաքին: Այս վերլուծությունը պետք է ի հայտ բերի յուրաքանչյուր խնդրի լուծման

հիմնական դերակատարներին, հետևի փոխգործակցության համակարգերին, առանձնացնի համագործակցության հաջողված մոդելները և բացահայտի թերությունները:

2-րդ փուլ. Պլանավորման ավարտ

Այս փուլի վերջնական արդյունքը Տեղական տնտեսական զարգացման պլանն է, որը պետք է լինի համառոտ (10-15 էջ), բայց նպատակաուղղված փաստաթուղթ: Գրանցվելուց հետո համայնքներն իրենց պլանը պետք է հաստատեն 1 տարվա ընթացքում, հակառակ դեպքում դուրս կմնան նախաձեռնությունից:

Տեղական տնտեսական պլանը պետք է առաջարկի տեղական տնտեսական զարգացման հիմնական շարժիչ ուժերին ուղղված լուծումների փաթեթ և մշակի հաջորդ 2 տարվա գործողությունների պլան: Այն պետք է տրամադրի նաև ծախսերի նախահաշիվ և սահմանի կատարողականի վերահսկողության ցուցանիշներ:

Հիմնական փաստաթուղթը կարող է կազմված լինել տվյալ երկրի պաշտոնական լեզվով, սակայն պարտադիր պետք է ներկայացվի անգլերեն համառոտ (1-էջանոց) ամփոփագիր, որն արտահայտում է միջամտությունների հիմնավորումը, գործողությունների ծրագիրը, ծախսերի նախահաշիվն ու կատարողականի վերահսկողության ցուցանիշները:

Պլանավորման գործընթացը պետք է կատարվի տեղական տնտեսական զարգացման պլանավորման սկզբունքներին ու փորձին համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ծրագիրն ուղղված չէ համապատասխան բոլոր ոլորտներին, այլ կենտրոնացած է տեղական տնտեսական կարևորագույն շարժիչների վրա:

Տեղական տնտեսական զարգացման յուրաքանչյուր գործընկերություն պետք է մոնիթորինգի ենթարկի իր գրանցած առաջընթացը և այն համեմատի պլանավորած գործողությունների հետ: Մոնիթորինգի սխեման Տեղական տնտեսական զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասն է և հիմքը՝ Ծրագրին միացող համայնքի կողմից իր առաջընթացը Քարտուղարությանը պաշտոնապես ներկայացնելու համար:

Տեղական տնտեսական զարգացման պլանի կառուցվածքի ձևանմուշը ներկայացված է **Հավելված 2-ում:**

3-րդ փուլ. Պլանի ներկայացում և գնահատում

Երրորդ փուլում արդեն համաձայնեցված Տեղական տնտեսական զարգացման պլանը պաշտոնապես պետք է ներկայացվի «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Քարտուղարությանը Պլանավորման գործընթացի որակի նախնական ստուգումից հետո (իրականացվում է Քարտուղարության կողմից) Տեղական տնտեսական զարգացման պլանը պետք է թարգմանվի անգլերեն և ներկայացվի Համաշխարհային բանկի դիտարկմանը: Համաշխարհային բանկի փորձագետները պետք է գնահատեն պլանի որակն ու ընդհանուր իրագործելիությունը: Նրանք կարող են նաև որոշակի փոփոխություններ առաջարկել՝ մինչև ծրագրի որակի պաշտոնական սերտիֆիկացումը: Հաշվի առնելով թարգմանության և փորձագիտական կարծիքի համար պահանջվող ժամանակը՝ ակնկալվում է, որ այս փուլը կտևի շուրջ 1 ամիս:

Տեղական տնտեսական զարգացման պլանի պաշտոնական հաստատումից հետո նախաձեռնության մասնակիցները ստանում են **Նախաձեռնության Գործող անդամի** կարգավիճակ և իրավասու կլինեն այն օգտագործելու ակտիվ բրենդավորման և դիրքավորման ժամանակ:

4-րդ փուլ. Պլանի իրագործում

Պլանի որակի սերտիֆիկացումից հետո տեղական տնտեսական զարգացման գործընկերությունը՝ համայնքի ղեկավարության առաջնորդությամբ, պետք է սկսի իրագործել նախանշված գործողությունները (Քարտուղարության տեխնիկական հատուկ աջակցությամբ և որոշ դրամաշնորհային ֆինանսավորմամբ): Համայնքները, բնականաբար, ծրագրերի իրագործման տարբեր ժամանակացույցեր կունենան, սակայն վաղ փուլում միացածները կարող են ավարտել ծրագիրը «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Քարտուղարության գործունեության ժամանակահատվածում և այդպիսով աջակցություն ստանալ պլանի իրագործման ամբողջ ընթացքում:

«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Քարտուղարությանը Գործող անդամի կարգավիճակը պահպանելու համար համայնքները պետք է «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Քարտուղարությանը ներկայացնեն առաջընթացի համառոտ կիսամյակային հաշվետվություն, որտեղ ներկայացված կլինեն ծրագրի իրագործման ընթացքը, մինչ այդ պահն ունեցած ձեռքբերումների ամփոփումը, «սովորած դասերը» և անհրաժեշտության դեպքում՝ փոփոխությունների առաջարկությունները:

5-րդ փուլ. Արդյունքների ամփոփում և ազդեցության գնահատում

Քանի որ Ծրագրին միացած համայնքներն իրենց պլաններն իրականացնում են սեփական ժամանակացույցով, դժվար է կանխատեսել, թե շոշափելի արդյունքները երբ ի հայտ կգան: Որպեսզի այդ արդյունքները տեսանելի լինեն նաև հավաստի վիճակագրական տվյալներում (ազդեցության ցուցանիշներ), ավելի երկար ժամանակ կպահանջվի, սակայն պլանի իրագործման միջնամասում (այսինքն՝ 12 ամսից) շատ հավանական է, որ արձանագրվի առաջին շոշափելի և չափելի առաջընթացը, որը կարող է արտահայտվել գործարար միջավայրի և կյանքի ընդհանուր որակի բարելավման տեսքով (Տեղական տնտեսական զարգացման պլանները, որոնք չեն ներառում բարդ, ժամանակատար և ծախսատար գործողություններ, կարող են արդյունքներ արձանագրել ավելի վաղ): Քարտուղարությունն այս փոփոխությունների մոնիթորինգը կիրականացնի համայնքների հաշվետվությունների հիման վրա և կապահովի գիտելիքների ու փորձի փոխանակումն ամբողջ տարածաշրջանում:

Ծրագրին միացած համայնքները, որոնք կիրագործեն իրենց պլանի առնվազն 70%-ը և կարձանագրեն նախատեսված փոփոխությունները տնտեսական զարգացման չափանիշներին համապատասխան, կստանան «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Պատվավոր անդամի կարգավիճակ: Այս նպատակին հասնելը նշանակում է, որ նրանք դարձել են «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» համայնքի «պատվավոր» անդամ՝ տիրապետելով ընդլայնված գործիքակազմի և հաստատելով կուռ գործընկերային հարաբերություններ՝ իրենց բնակավայրի կայուն զարգացումը երաշխավորելու համար:

Քարտուղարությունը կօգնի համայնքներին ապահովել ձեռք բերված արդյունքների կայունությունը և խորհրդատվություն կտրամադրի, թե ինչպես խորացնել տեղական տնտեսական զարգացման գործընկերությունը ու հավատարիմ մնալ Նախաձեռնության սկզբունքներին:

«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Քարտուղարության դերը

Հինգ փուլերի ընթացքում «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Քարտուղարությունը իր կենտրոնական գրասենյակի և Արևելյան գործընկերության երկրների տեղական մասնաճյուղերի օգնությամբ Ծրագրին միացած համայնքների (և նման մտադրություն ունեցողների) համար կլինի հիմնական կոնտակտային կետը, և կօգնի կապ հաստատել տարածաշրջանում Եվրոպական միության նախաձեռնությունների, պոտենցիալ ներդրողների և միջազգային ֆինանսական հաստատությունների հետ:

Ծրագրի մասնակիցների համար Քարտուղարությունը երկակի դեր կխաղա՝
1) Որպես հիմնական աջակցություն տրամադրող,
2) Որպես Նախաձեռնության գործընթացների և արդյունքների մոնիթորինգ իրականացնող:
Վերոնշյալ դերերը մանրամասն ներկայացված են ստորև.

Քարտուղարության աջակցություն

«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Քարտուղարությունը քարտուղարությունը հետաքրքրված կողմերին և անդամներին պետք է տրամադրի ճշգրիտ, թարմ տեղեկատվություն, վարչարարական և տեխնիկական աջակցություն, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, նրանց համար ապահովի անհատական դասընթացների մասնակցություն և փորձագիտական աջակցություն:

Քարտուղարության տրամադրած աջակցության տեսակներն են՝

- Փորձագիտական խորհրդատվություն,
- Տեղեկատվություն և գիտելիք,
- Ռազմավարական գործընկերության հիմնում,
- Կարողությունների զարգացում հետևյալ ուղղություններով (ցանկը կարող է համալրվել)՝
  - Տեղական տնտեսական զարգացման պլանավորում,
  - Նախագծի հիման վրա տեղական տնտեսական զարգացման մոտեցումներ,
  - Տեղական տնտեսական զարգացման «խելացի» լուծումներ,
  - Ֆինանսներ և գնումներ տեղական տնտեսական զարգացման համար,
  - Գործընկերություն և համագործակցություն տեղական տնտեսական զարգացման համար,
- Ծրագրի մասնակիցների վերաբերյալ լայն լուսաբանում:

Յուրաքանչյուր փուլի համար նախատեսված աջակցության տեսակներին կարող եք ծանոթանալ ստորև ներկայացված Աղյուսակ 1-ում («Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» գործընթացի ներկայացում»):

Մոնիթորինգ

Նախաձեռնության տարբեր փուլերի ընթացքում Քարտուղարությունը հանդես է գալու որպես որակի մոնիթորինգի մարմին (որոշ փուլերում՝ Համաշխարհային բանկի օժանդակությամբ):

Նախաձեռնության մասնակիցների կատարողականը գնահատվելու է 4 տեսանկյունից (կախված ծրագրի կոնկրետ փուլից).

I. Պլանավորման գործընթացի որակ,
II. Տեղական տնտեսական զարգացման պլան (մասնակցի փաստաթուղթը),
III. Տեղական տնտեսական զարգացման պլանի իրագործման գործընթաց,
IV. Տեղական տնտեսական զարգացման արդյունքների և ազդեցության գնահատում:

Վերոնշյալ կետերի առանձնահատկություններն առավել մանրամասն ներկայացված են ստորև.

I. Պլանավորման գործընթացի որակ

Գրանցվելուց մինչև պլանավորման ավարտ որակի վերահսկողությունը վերաբերելու է նրան, թե ինչպես են պլանավորման գործընթացները ներդրվել, արդյոք դրանք իրականացվել են բաց և մասնակցային եղանակով, արդյոք խորքային վերլուծությունն իրականացվել է հետևողական և տրամաբանական ճանապարհով՝ հիմված կոնկրետ փաստերի վրա: Կկատարվեն մոնիթորինգային այցեր, սակայն այս փուլերում որակի վերահսկողությունը հիմնականում կիրականացվի վերջնական պլանին ուղեկցող փաստաթղթերի միջոցով (օրինակ՝ տեղական տնտեսական զարգացման գործընկերության կազմը, տեղական տնտեսական զարգացման գործընկերության հանդիպումների արձանագրությունները, պլանավորման նիստերի փաստաթղթավորումը, օգտագործված առկա պլաններն ու ուսումնասիրությունները և այլն):

II. Տեղական տնտեսական զարգացման պլան

Տեղական տնտեսական զարգացման պլանի **ներկայացման և գնահատման** փուլերում որակը կստուգվի Համաշխարհային բանկի հետ համագործակցությամբ՝ ընդհանուր չափորոշիչներին համապատասխան: Այդպիսի չափորոշիչներն են՝ ծրագրված միջոցառումների ընդհանուր տրամաբանությունը, առաջարկված լուծումների արդիականությունն ու իրագործելիությունը, կատարողականի ցուցանիշներն ու թիրախները, կայունությունը և այլն:

III. Տեղական տնտեսական զարգացման պլանի իրագործում

Իրագործման փուլում «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Քարտուղարությունը մոնիթորինգի կենթարկի մասնակիցների առաջխաղացումը՝ ըստ տեղական տնտեսական զարգացման ծրագրով հանձն առած չափորոշիչների և գործողությունների: Կպահանջվեն կիսամյակային պարբերական հաշվետվություններ, որոնք կգնահատվեն և կփաստաթղթավորվեն Քարտուղարության կողմից: Այս փուլում առավել կարևոր չափանիշներն են՝

1. Արդյոք պլանը ճիշտ է իրականացվում ժամկետների և բովանդակության տեսանկյունից (կարող են կիրառվել հետևյալ գնահատականները՝ «Ժամանակացույցից առաջ», «Ժամանակացույցին համապատասխան», «Ժամանակացույցից փոքր-ինչ շեղված» և «Ժամանակացույցից զգալիորեն շեղված»):

2. Մինչ տվյալ պահը փաստացի կատարված միջոցառումների տոկոսային հարաբերակցությունը (կամ որոնց իրականացումն արդեն սկսվել է՝ պլանավորված գործողությունների համեմատ:

3. Մինչ տվյալ պահը տեղական տնտեսական զարգացման պլանի իրագործման նպատակով արտաքին աղբյուրներից ստացված ֆինանսական միջոցների տոկոսային հարաբերակցությունը պլանավորված ֆինանսավորման նկատմամբ:

IV. Տեղական տնտեսական զարգացման արդյունքների և ազդեցության գնահատում

Վերջին՝ **«Արդյունքներ և ազդեցություն»** փուլում մասնակիցների ջանքերի արդյունքները պետք է տեսանելի լինեն անհատական ցուցանիշներով, որոնք նախապես սահմանվել էին պլաններում: Ծրագրի շրջանակում ձեռքբերումները կգնահատվեն համայնքների հաշվետվությունների հիման վրա, իսկ հաջողության պատմությունները որպես օրինակելի ծրագրեր կներկայացվեն Նախաձեռնության շրջանակում:

Ի հավելում, հետևյալ ընդհանուր ցուցանիշները[3] կարող են կիրառվել Արևելյան գործընկերության երկրներում Տեղական տնտեսական զարգացման պլանների երկարաժամկետ ազդեցությունը չափելու համար.

1. Տվյալ տարածաշրջանում ստեղծված նոր աշխատատեղերի թիվ,
2. Տեղական հարկային եկամուտների տոկոսային աճ՝ պայմանով, որ տեղական հարկային համակարգը հնարավորություն ընձեռի, որպեսզի տեղական հարկերն ու տուրքերը հավաքվեն համայնքային իշխանությունների կողմից,
3. Տվյալ տարածաշրջանում ներդրումների աճ (արտահայտված եվրոյով):

Նախաձեռնության յուրաքանչյուր փուլում «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Քարտուղարության աջակցման և մոնիթորինգի գործառույթները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

[3] Տեղական տնտեսական զարգացման գործողությունների ազդեցության չափումը հիմնարար նշանակություն ունի տեղական իշխանությունների համար՝ իրենց ընդհանուր կատարողականը գնահատելու համար: Շոշափելի և չափելի արդյունքներ ստանալը ժամանակ է պահանջում, որը կարող է գերազանցել «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Քարտուղարության գործունեության տևողությունը: Այս ցուցանիշներն առաջարկվում են մասնակիցներին զուտ որպես սեփական ախտորոշման գործիք: Քարտուղարությունը չի պահանջում սահմանել տեղական զարգացման պլանների նմանատիպ թիրախներ կամ արձանագրել դրանց հաջողությունները:

Դրամաշնորհային աջակցություն

Արևելյան գործընկերության երկրներում Եվրոպական միությունը դրամաշնորհային որոշ ծրագրերի համար կառաջարկի ֆինանսական աջակցություն՝ Տեղական տնտեսական զարգացման պլանին համապատասխան: Հայտերի ներկայացման առաջին փուլում (2017թ. առաջին եռամսյակ) լավագույն նախագծերը կֆինանսավորվեն և տեղական տնտեսական զարգացման ծրագրի կոնկրետ գործողությունների կատարման օրինակ կծառայեն:

«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Քարտուղարությունը կաջակցի և խորհրդատվություն կտրամադրի Ծրագրի պոտենցիալ անդամ համայնքներին՝ ծրագրային առաջարկներ պատրաստելու հարցում: Սակայն այդ համայնքները պետք է սեփական ուժերով մշակեն և ներկայացնեն նախագծերի առաջարկները:

Որպեսզի տեղական տնտեսական զարգացման ծրագրերով սահմանված գործողությունների մեծ մասը ֆինանսավորվի, համայնքի ղեկավարները պետք է օգտագործեն նաև իրենց ազգային ու տարածքային բյուջեները և ժամանակի ընթացքում ներգրավեն միջազգային այլ դոնորների, ինչպես նաև մասնավոր հատվածի ներդրողներին:

«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Քարտուղարությունը կօգնի համայնքներին բացահայտելու իրենց գործողությունների և նախագծերի ֆինանսավորման համար պոտենցիալ աղբյուրներ:

Աղյուսակ 1. «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» գործընթացի ներկայացում

ՓՈՒԼ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ՄՈՆԻԹՈՐԻՆԳ
Գրանցում	• Ծրագրի պոտենցիալ մասնակիցները լիարժեք տեղեկացված են «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» հնարավորությունների և իրենց պարտավորությունների մասին, • Ձևավորված է տեղական տնտեսական զարգացման գործընկերությունը, • Գրանցումը հնարավոր է ցանկացած պահի, • Ձեռք բերվող կարգավիճակը՝ **«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության Սկսնակ անդամ:**	• «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Քարտուղարության միջոցով տեղեկատվական լայն քարոզարշավ և գրանցման գործընթացին աջակցություն, • Տեղեկատվական աջակցության կետերի առկայություն յուրաքանչյուր երկրում	Պլանավորման գործընթացում կիրառվող որակի չափանիշներ. • Նշանակվում է հատուկ համայնքային համակարգող՝ «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» գործունեության բոլոր փուլերը վերահսկելու համար, • Հանձնառություն ինչպես համայնքի, այնպես էլ տեղական տնտեսական զարգացման գործընկերների կողմից:
Պլանավորման սկիզբ	• Մասնակից համայնքների կարիքների գնահատում, • տեղական տնտեսական զարգացման գործընկերությունը վերլուծում է տեղական տնտեսական կառուցվածքը՝ «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման»նախաձեռնության հիմնասյուներին համապատասխան, • Սահմանվում են ելակետային ցուցանիշները:	• տեղական տնտեսական զարգացման պլանավորման կարողությունների զարգացում, • Խորհրդատվություն յուրաքանչյուր վերլուծության նպատակի, գործընթացի, մեթոդների և գործիքների վերաբերյալ, • Ըստ անհրաժեշտության՝ փորձագիտական աջակցություն ընտրված ոլորտներում, • Որակի հսկողություն և հետադարձ կարծիք փորձագետների կողմից:	Պլանավորման գործընթացում կիրառվող որակի չափանիշներ. պլանավորման գործընթացը պետք է՝ • Անցկացվի պարբերական հիմքով, • Ունենա մասնակցային բնույթ, • Հիմված լինի առկա փաստերի վրա, • Հիմված լինի շահագրգիռ կողմերի փոխհամաձայնության վրա:
Պլանավորման ավարտ	• Տեղական տնտեսական զարգացման գործընկերությունը որոշում է տեսլականը, խնդիրներն ու նախնական գործողությունների համաձայնեցված ցանկը, • Կազմվում է "տեղական տնտեսական զարգացման պլանը՝ որոշելով տեղական տնտեսական շարժիչներն ու կատարվելիք գործողությունները, • Ձևավորվում է համայնքի կողմից ուղղորդվող հանրային-մասնավոր հատված տեղական տնտեսական զարգացման գործընկերությունը և համաձայնություն է ձեռք բերվում հետագա գործունեության մոդելի շուրջ:	• Ըստ անհրաժեշտության՝ փորձագիտական աջակցություն ընտրված ոլորտներում, • Տեղական տնտեսական զարգացման պլանավորման կարողությունների զարգացում, • Խորհրդատվություն յուրաքանչյուր վերլուծության նպատակի, գործընթացի, մեթոդների և գործիքների վերաբերյալ, • Որակի հսկողություն և հետադարձ կարծիք փորձագետների կողմից:	Պլանավորման գործընթացում կիրառվող որակի չափանիշներ. Տեղական տնտեսական զարգացման պլանի եզրակացություններն ու հիմնական դրույթները պետք է՝ • Հիմված լինեն վստահելի տեղեկատվության և տվյալների վրա, • Ունենան մասնակցային բնույթ, • Հիմված լինեն ընդհանուր փոխհամաձայնության վրա:
Ծրագրի ներկայացում և գնահատում	• Տեղական տնտեսական զարգացման պլանի ներկայացումից և հաստատումից հետո մասնակիցների անդամության աստիճանը բարձրացվում է և “«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Քարտուղարության կողմից տրամադրվում է համապատասխան բրենդինգի ու ֆինանսական աջակցության հասանելիություն, • Ձեռք բերվող կարգավիճակը՝ **«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության Գործող անդամ:**	• Տեխնիկական աջակցություն Համաշխարհային բանկից, • «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Քարտուղարության և Հարևանության և ընդլայնման բանակցությունների հարցերով գլխավոր տնօրինության կողմից տեղական տնտեսական զարգացման պլանի որակի ստուգում, և անհրաժեշտության դեպքում՝ կարծիքի տրամադրում:	• Պլանավորման գործընթացում որակի վերոնշյալ չափանիշները նախապես ստուգվում են «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» քարտուղարության կողմից, • տեղական տնտեսական զարգացման պլանի իրագործելիությունն ու որակի հսկողությունն իրականացվում է Համաշխարհային բանկի կողմից և պաշտոնապես հավաստագրվում:
Պլանի իրագործում	• «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության ակումբի անդամակցություն, • Վերապատրաստումներ, ուսուցողական շրջագայություններ և թեմատիկ գործնական պարապմունքներ համայնքային աշխատակիցների և տեղական գործընկերների համար, • Աշխատակիցների փոխանակման գործիքներ՝ լավագույն փորձերի փոխանակման համար • Մասնակիցների կողմից կիսամյակային հաշվետվությունների ներկայացնում «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Քարտուղարությանը	• Պահանջարկի խթանման և առաջխաղացման կարողությունների զարգացում, տեղական տնտեսական զարգացման ծրագրի կատարման վերաբերյալ խորհրդատվություն, կատարողականի գնահատում (դասընթացներ, ուսումնական այցեր, աշխատակիցների փոխանակում և այլն), • Դրամաշնորհների որոնման և ներդրումային ծրագրերի նախապատրաստման աջակցություն, • Արտաքին դիրքավորման և մարքեթինգի հարցով աջակցություն, • Պիլոտային որոշ նախագծերի ֆինանսավորում՝ ցույց տալու, թե ինչպես կարելի է տեղական տնտեսական զարգացման նախագիծը ներդնել գործնականում:	Իրագործման գործընթացում մոնիթորինգն անցկացվում է «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Քարտուղարության կողմից՝ հիմված մասնակիցների կիսամյակային հաշվետվությունների և թարմացումների վրա: Հիմնական ցուցանիշներն են • «Ժամանակացույցին համապատասխան/ Ժամանակացույցից շեղված» չորս աստիճանով, • Տեղական տնտեսական զարգացման պլանի գործողությունների մասնաբաժինը, որն իրականցվել է (կամ որի իրականացումը մեկնարկել է), • Ծրագրի բյուջետային պահանջների մասնաբաժինը, որի համար փաստացի ներգրավվել են ֆինանսական միջոցներ (այդ թվում՝ արտաքին աղբյուրներից):
Արդյունքներ և ազդեցություն	• Տեղական ինքնակառավարման մարմինը կատարել է ծրագրի առնվազն 70%-ը և պարտավորվում է շարունակել տեղական տնտեսական զարգացման խթանումը, • Մասնավոր հատվածը շարունակում է ներգրավված մնալ գործընթացում, • Մեկնարկել է կատարողականի մոնիթորինգը, • Վերափոխման գործընթացը մեկնարկել է և ծավալվում է, • Ձեռք բերվող կարգավիճակը՝ **«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության Պատվավոր անդամ:**	• Հաշվետվությունների պարբերաբար ներկայացում Քարտուղարությանը, արդյունքների և հաջողված պատմությունների տարածում «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման նախաձեռնության» հեռահաղորդակցման գործիքներով, • Միջազգային ֆինանսական հաստատությունների և պոտենցիալ ներդրողների հետ փոխգործակցություն, • Անհրաժեշտության դեպքում փորձագիտական աջակցություն, • Արտաքին դիրքավորման և մարքեթինգի հարցով աջակցություն, • Միջազգային գործընկերների հասանելիություն:	Արդյունքների և ազդեցության գնահատումը չափվում է մի շարք ցուցանիշներով՝ ներկայացված յուրաքանչյուր տեղական տնտեսական զարգացման պլանում և հաստատված Համաշխարհային բանկի կողմից: Առաջարկված ընդհանուր ազդեցության ցուցանիշներն են՝ • Նոր ստեղծված աշխատատեղերի թիվը, • Տեղական հարկային եկամուտների աճը (%), • Տարածքում ներդրումների աճը (արտահայտված եվրոյով):

Կապ

Խնդրում ենք կապվել մեզ հետ.

Mayors for
Economic Growth

«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնության Քարտուղարության կենտրոնական գրասենյակ (Թբիլիսի, Վրաստան)

Պիտեր Կորսբի, Ծրագրի ղեկավար
Յուլյա Զինգաիլո, Տարածաշրջանային համակարգող, հաղորդակցության գծով մենեջեր)
Թամար Բեժանիշվիլի, Գրասենյակի պատասխանատու

+995322475745 info@m4eg.eu www.m4eg.eu

Այս ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ուշադրություն: Այս հրապարակման մեջ ներկայացված տեղեկատվությունը և կարծիքները հեղինակներինն են և կարող են չհամընկնել Եվրոպական միության պաշտոնական տեսակետներին: Եվրոպական միության հաստատությունները և կառույցները կամ նրանց անունից հանդես եկող անձիք պատասխանատվություն չեն կրում այս հրապարակման մեջ ներկայացված տեղեկատվության օգտագործման համար:

Տեղեկատվության վերարտադրումը թույլատրելի է միայն սկզբնաղբյուրը նշելու դեպքում: